# Միգրացիայի և մուտքի արտոնագրի մասին տեղեկատվություն սեռական և միջանձնային բռնության ենթարկված անձանց համար

Միջազգային ուսանողներին և կրթաթոշակով սովորողներին, ովքեր հարցեր ունեն իրենց միգրացիայի և մուտքի արտոնագրերի կարգավիճակի վերաբերյալ, խորհուրդ է տրվում դիմել միգրացիոն փաստաբանին: Սույն փաստաթուղթը հանդիսանում է ռեսուրս՝ պարզաբանելու օրենքի որոշ ասպեկտներ, սակայն այն չի կարող փոխարինել իրավաբական խորհրդատվությունը:

**Ես բռնության ենթարկված անձ եմ: Կարո՞ղ է արդյոք իմ միգրացիոն կարգավիճակը ազդել համալսարանի ռեսուրսներից օգտվելու իմ հնարավորության վրա:**

Ոչ: Ըստ օրենքի, ուսանողներն ու աշխատակազմը, ովքեր հանդիսանում են սեռական և միջանձնային բռնության ենթարկված անձիք կամ բնությունից փրկվածներ, օգտվում են նույն իրավունքներից համաձայն 1972 թ. Կրթության փոփոխությունների մասին փաստաթուղթ IX-ի (փաստաթուղթ IX) և կանանց դեմ բռնության ակտի՝ (VAWA) անկախ միգրացիոն և մուտքի արտոնագրի կարգավիճակից:

Համալսարանի բժշկական և խորհրդատվական ռեսուրսների, ինչպես նաև հասանելի կացարանների մասին տեղեկատվություն կարելի է գտնել այստեղ՝ https://1is2many.okstate.edu/

Ուսանողների վարվեցողության կանոնների ընթացակարգի մասին տեղեկատվություն կարելի է գտնել այստեղ՝ https://studentconduct.okstate.edu/code

Քոլեջը վրեժխնդիր լինի Ձեզանից կամ այլ կերպ չի վարվի Ձեզ հետ՝ հանցագործության մասին հայտնելու համար

**Որպես փաստաթղթավորված կամ չփաստաթղթավորված միգրանտ, կարո՞ղ եմ արդյոք քրեական մեղադրանքներ ներկայացնել/հրապարակել**

Այո: Ձեր երկրում սեռական, ընտանեկան, ժամադրության ընթացքում կիրառված բռնության, հետապնդման սահմանումների վերաբերյալ տեղեկատվություն կարող եք գտնել անվտանգության վերաբերյալ տարեկան զեկույցում: https://police.okstate.edu/annual-security-reports

Մեղադրանք ներկայացնելու վերաբերյալ հատուկ հարցերով կարող եք դիմել՝

Oklahoma State University Police Department, OSUPD
104 USDA Building, Stillwater, Oklahoma 74078
405-564-6523
https://police.okstate.edu/
1is2many@okstate.edu

**Կա՞ն արդյոք հատուկ մուտքի արտոնագրի և միգրացիոն կարգավիճակներ հանցավոր գործունեության ենթարկված անձանց համար:**

Այո: Սեռական, ընտանեկան, ժամադրությունների ընթացքում կիրառված բռնության և հետապնդման ենթարկված անձանց համար կարող են լինել մուտքի արտոնագրի այլ տարբերակներ, ներառյալ U և T մուտքի արտոնագրերը: Առավել մանրամասն տեղեկատվության համար, զրուցե՛ք միգրացիոն փաստաբանի հետ:

| **U մուտքի արտոնագիր** | **T մուտքի արտոնագիր** |
|---|---|
| Որոշակի հանցավոր գործունեության, այդ թվում՝ սեռական չարաշահման, ընտանեկան բռնության, բռնաբարության, հարձակման կամ այլ դրանց հետ կապված հանցավոր գործողությունների արդյունքում, զգալի ֆիզիկական կամ մտավոր չարաշահման ենթարկված անձանց համար՝<br>- տուժածը/դիմողը պետք է հանդիսանա սահմանված քրեական գործունեության ենթարկված անձ և, ամենայն հավանականությամբ, օգտակար լինի այդ հանցագործությունը քննող քննչական մարմիններին և /կամ դատախազությանը;<br>- Ընդհանրապես վավեր է չորս տարի<br>- Հավելյալ տեղեկատվության համար խորհրդակցե՛ք միգրացիոն փաստաբանի հետ, որը կարելի է տեսնել հետևյալ հղմամբ՝ | Մարդկանց առևտրի ենթարկված անձանց համար համար<br>- Պետք է համապատասխանի իրավապահ մարմինների ողջամիտ պահանջներին՝ համագործակցելու մարդկանց առևտրի ակտի (երի) քննության կամ քրեական հետապնդման գործում (բացառությամբ, երբ չի կարող համագործակցել ֆիզիկական կամ հոգեբանական տրավմայի պատճառով), և կարողանա ներկայացնել, որ ԱՄՆ-ից վտարելու դեպքում կենթարկվի ծայրահեղ տառապանքների;<br>- Ընդհանրապես վավեր է չորս տարի<br>-Հավելյալ տեղեկատվության համար խորհրդակցեք միգրացիոն փաստաբանի հետ, որը կարելի է տեսնել հետևյալ հղմամբ՝ |
| http://www.uscis.gov/humanitarian/victims-human-trafficking-other-crimes/victims-criminal-activity-u-nonimmigrant-status/victims-criminal-activity-u-nonimmigrant-status | http://www.uscis.gov/humanitarian/victims-human-trafficking-other-crimes/victims-human-trafficking-t-nonimmigrant-status |

**Կա՞ արդյոք համալսարանում գրասենյակ, որը կարող է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն**

, International Students & Scholars
250 Student Union, Stillwater, OK 74078
405-744-5459
https://lcl.okstate.edu/iss/
su-iss@okstate.edu

Ուսանողների և կրթաթոշակով սովորողների ծառայություններով զբաղվող միջազգային գրասենյակը կարող է օգտակար տեղեկատվություն տրամադրել միգրացիայի կարգավիճակի վերաբերյալ: Ուշադրություն՝ մուտքի արտոնագրերի այլ կարգավիճակների փոփոխությունների հետ կապված, կամ իրավական տարբերակների, որոնք ընկնում են F-1 և J-1 ուսանողական մուտքի արտոնագրերի չափանիշներից դուրս, կամ գործատուի կողմից հովանավորվող աշխատանքային մուտքի արտոնագրերի վերաբերյալ հարցերի համար խորհրդակցե՛ք որակավորում ունեցող միգրացոն փաստաբանի հետ:

| ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ |
|---|

| | |
|---|---|
| F-1 և J-1 կարգավիճակ ունեցող ուսանողներ<br>• արտոնագրված բժշկի, ոսկրային պաթոլոգի կամ արտոնագրված կլինիկական հոգեբանի կողմից հաստատված բժշկական պայմանների պատճառով կրճատ ծանրաբեռնվածությամբ դասընթացների տարբերակներ<br>• Տարբերակներ և հետևանքներ, որոնց պատճառով Ձեզ հեռացնում են ուսումնական ծրագրից:<br>• Եթե ուսանողն ընտրում է ուսումնական ծրագրից դուրս գալու տարբերակը, ավելի ուշ ակադեմիական ծրագրին վերադառնալու մասին տեղեկատվություն:<br>• Կանանց/ամուսիններին ուղեկցելու տարբերակներ և հնարավորություններ<br>• Մուտքի արտոնագրի կարգավիճակը փոխելու տարբերակների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն<br>• U և T մուտքի արտոնագրերի մասին ընդհանուր տեղեկատվություն (դիմել որակավորում ունեցող միգրացիոն փաստաբանին)<br>• Դիմել որակավորում ունեցող փաստաբանի | H-1B, O-1, E-3, կամ TN աշխատողներ<br>• Տարբերակներ աշխատանքից թույլատրելի բացակայության և հնարավորություններ Ձեր միգրացիոն կարգավիճակի համար<br>• Տարբերակներ և հնարավորություններ ուղեկցող կանանց/ամուսինների համար<br>• Ընդհանուր տեղեկատվություն մուտքի արտոնագրի կարգավիճակը փոխելու վերաբերյալ: Դիմել որակավորում ունեցող միգրացիոն փաստաբանին<br>• Ընդհանուր տեղեկատվություն U և T մուտքի արտոնագրերի վերաբերյալ: (Դիմել որակավորում ունեցող միգրացիոն փաստաբանին)<br>• Դիմել որակավորում ունեցող միգրացիոն փաստաբանին<br>• ԱՄՆ մշտական կացության համար դիմած սպասողներ (Գրին քարտը դեռ չի հաստատվել)<br>• Ձեր աշխատանքը թողնելու ազդեցությունը գործատուի կողմից երաշխավորված սպասման մեջ գտնվող Ձեր մշտական կացության դիմումի վրա<br>• Դիմել որակավորված փաստաբանին |

**Ո՞վ է միգրացիոն փաստաբանը և ի՞նչ են նրանք անում:**

Միգրացիոն փաստաբաններն արտոնագրված փաստաբաններ են, ովքեր մասնագիտանում են միգրացիոն օրենքի ոլորտում: Նրանք գործում են որպես հաճախորդի փաստաբան և կարող են նրանց ներկայացնել միգրացիոն գրասենյակներում, միգրացիոն դատարանում ինչպես նաև միգրացիայի համար դիմումներ լրացնելիս: Փաստաբանը կարող է տալ ընդհանուր խորհուրդ և քննարկել միգրացիոն տարբերակները: Ինչպես բոլոր փաստաբանները, այս փաստաբանները նույնպես պարտավոր են հետևել մասնագիտական էթիկային և օրենքի պահանջներին և ապահովել հաճախորդի հետ քննարկումների գաղտնիությունը:

**Որտե՞ղ կարող եմ գտնել միգրացիոն փաստաբան:**

| |
|---|
| Միացյալ Նահանգների քաղաքացիության և միգրացիոն ծառայությունները (USCIS), Ազգային Անվտանգության վարչության բյուրոն , (DHS), առաջարկում են երկու վեբ-կայք, որոնք կարող են օգնել անհատներին՝ գտնելու անվճար և մատչելի իրավական ներկայացուցիչներ:<br><br>USCIS- աջակցություն կարող եք գտնել Ձեր համայնքի վեբ կայքում USCIS- գտնել իրավաբանական ծառայությունների վեբ կայքը |
| Միգրացիոն բողոքարկումների խորհուրդը /ՄԲԽ/ տրամադրում է այն հանրային պաշտպանների/ պետական փաստաբանների ցանկը, ովքեր միգրացիոն ծառայություններ կտրամադրեն անվճար, կամ մատչելի գներով: |
| Ամերիկյան միգրացիոն իրավաբանների ասոցիացիան (AILA) առաջարկում է օնլայն/առցանց իրավաբանական ծառայություն, որը կարող է օգնել ուսանողին կամ կրթաթոշակով սովորողին՝ գտնել միգրացիոն փաստաբան: |
| Ամերիկայի Իրավաբանների Ասոցիացիան նույնպես տրամադրում է պետական իրավաբանական ծառայություններ գտնելու վերաբերյալ տեղեկատվություն: |